ՀԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿՅԱՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԳՈՎ

Թորգոմ Պատրիարք Գուշակյանը (1874-1939 թթ.) Հայոց Եկեղեցու պատմության նոր շրջանի նշանավորագույն հոգևոր գործիչներից է, ով իր պատմագիտական ու կրոնագիտական հետաքրքրությունների լայն շրջանակի մեջ քննության է առել նաև Եկեղեցու բարեկարգության խնդիրը: Այս հարցին նա պարբերաբար անդրադարձել է դեռևս 1920-ական թվականներից սկսյալ, ինչը պայմանավորված էր երկու հանգամանքով: Առաջինը Հայոց Մեծ եղեռնից հետո ստեղծված իրավիճակն էր, երբ հայ ժողովրդի զգալի մասը ստիպվեց աշխարհով մեկ՝ կտրվելով իր պատմական բնաշխարհից, որի վրա և որում կեցության ավանդական կերպի վրա էր խարսխված նաև Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգն ու ընդհանրապես ողջ կառույցը, որը տնավեր ու գաղթական ժողովրդի հետ հիմա հայտնվել էր միանգամայն այլ իրավիճակում, իսկ երկրորդը ժամանակի թելադրանքն ու պահանջն էր:

Եկեղեցական բարենորոգության հարցը ազգային-եկեղեցական կյանքում արծարծվել և ժամանակի հասարակական ու կրոնական պարբերականներում սկսվել է քննարկվել դեռևս անցյալ դարի կեսերից: 20-րդ դարի սկզբից այս հարցին անդրադարձել են նաև Ազգային-Եկեղեցական ժողովները: 1906 թ. գումարվում է ռուսահայոց կենտրոնական ժողովը, սակայն այն չհասցրեց որևէ որոշում ընդունել, քանի որ փակվեց ցարական իշխանությունների պահանջով:

Ընդառաջելով տարբեր թեմերի ու հոգևորականների դիմումներին՝ Գևորգ Ե Սուրենյանցը 1917 թ. Մայր Աթոռում հրավիրում է ռուսահայ հոգևորականության խորհրդակցական ժողով, որին մասնակցում են 67 պատվիրակներ: Նրանք բերել էին նաև իրենց թեմերի և համայնքների առաջարկությունները: Մի քանի օր տևած ժողովում քննարկվում են բազմաթիվ հարցեր, այդ թվում և՝ բարեկարգության, որի համար ընտրվում է մի հատուկ հանձնաժողով: Վերջինիս հանձնարարվում է հավաքել և ի մի բերել բարեկարգությանը վերաբերող բոլոր նյութերն ու առաջարկությունները և դրանք մշակել համապատասխան դասակարգմամբ ու խմբավորմամբ՝ ընդգրկելով նաև կարող ու գիտակ այլ ուժերի ևս: Հանձնաժողովի աշխատանքի ավարտվելուց հետո գումարվելու էր բարեկարգության խնդրին

նվիրված Ազգային-Եկեղեցական ժողով, որը, սակայն, հնարավոր չեղավ հրավիրելու նախ՝ պատերազմական, ապա և՝ քաղաքական անկապտ իրավիճակների պատճառով: Տեսնելով, որ ներկայացուցչական նման ժողովի գումարումը երկար ժամանակով կարող է ձգձգվել, Գևորգ Ե Կաթողիկոսը մի քանի կարևոր ու ժամանակի թելադրանքով ծնված հարցերի մասին պահանջում է Երուսաղեմի և Կ. Պոլսի Պատրիարքների գրավոր պաշտոնական կարծիքներն ու եզրակացությունները և ապա հրապարակում հայրապետական հետևյալ կանոնական կոնդակները.

ա) 1922 թ. նոյեմբերի 11-ին՝ թ. 644, որով՝ արտոնում է այրի քահանաների կրկնամուսնությունը:

բ) 1922 թ. նոյեմբերի 11-ին՝ թ. 645, որով թույլատրվում են ազգակցական հինգերորդ և խնամիական չորրորդ աստիճանի պսակները և վերացվում ամուսնության վերաբերյալ հոգևոր ազգակցության բոլոր տեսակ արգելքները:

գ) 1923 թ. նոյեմբերի 9-ին՝ թ. 349, որով ընդունվում է նոր տոմարը և պատվիրվում նրանով առաջնորդվել:

դ) 1923 թ. նոյեմբերի 9-ին՝ թ. 350, որով թույլատրվում է հայկական եկեղեցիներում ժամապաշտության ժամանակ երգեհոնի և երաժշտության գործածությունը:

Հետևողականորեն շարունակելով այս աշխատանքները՝ 1923 թ. նոյեմբերի 24-ին Գևորգ Ե Կաթողիկոսն իր հաստատմամբ Մայր Աթոռում կազմում է «Հայոց Եկեղեցու բարեկարգության Կենտրոնական հանձնաժողով»: Հանձնաժողովի ունեցած նյութերը կենտրոնացվում են Գերագույն Հոգևոր Խորհրդի դիվանում[1]: Բարեկարգության հարցը քննվում է նաև 1932 թ. Ազգային-Եկեղեցական ժողովում: Վերջինիս, ինչպես նաև նախորդ տասնամյակների առաջարկությունների, կարծիքների և արված աշխատանքների ու մշակումների վրա հիմնվելով՝ Խորեն Ա Կաթողիկոսն իր անդրանիկ կոնդակում Հայ Եկեղեցու բարեկարգությունը և սահմանադրությունը ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է գտնում շարունակել այն իրականացնելու գործը՝ «ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի՝ կազմել նոր սահմանդրութիւն և բարեկարգել և նորոգել զհնացեալ սովորութիւնս և կարգս, որք կարօտին սրբագրութեան»[2]:

Այնուհետև 1937 թ. օգոստոսի 1 թվակիր թիվ 417 կոնդակով Խորեն Ա Մուտաֆբեկյանը շեշտում է այս հարցի քննության կարևորությունը և ասում, որ կոնդակին կից ներկայացվող «Զեկուցումն Հայոց Եկեղեցու բարենորո-

---

[1] Այս շրջանի եկեղեցական բարեկարգության հարցի մասին տե՛ս Զաւէն Աւագ քահանայ Արզումանեան, Ազգապատում, հտ. Դ, Ա գիրք, Նիւ Եորք, 1995, էջ 309 և Գեղամ սրկ. Մարտիրոսյան, Ուրվագիծ Հայ Եկեղեցու բարեկարգության պատմության, «Էջմիածին», 1998, Զ, էջ 133-141:

[2] «Միոն», 1933 թ., էջ 294:

գութեան մասին» խորագրված ծրագրի վերաբերյալ դիտողությունները, կարծիքներն ու առաջարկությունները Սփյուռքի թեմերից ուղարկվեն Թորգոմ Սրբազանին, և նա էլ դրանք, իր եզրակացությամբ հանդերձ, ներկայացնի Մայր Աթոռ՝ վերջնական խմբագրման և ընդունման համար[3]: Թորգոմ Սրբազանը, «Սիոնում» տպագրելով կոնդակը և նրա աշխարհաբար թարգմանությունը և «Զեկուցումը», վերջինիս հաջորդող խմբագրականով զգուշացնում է, որ բարեկարգությանը «հարկ էր մօտենալ վերին աստիճանի զգուշութեամբ, զգաստ հոգով, լուրջ միջոցներով, երկիւղածութեամբ և իմաստութեամբ միանգամայն»[4]: Նաև ավելացնում է, թե «Զեկուցումը» ամէն ինչ տնօրինած է իմաստութեամբ և համաձայն մեր Եկեղեցւոյ կանոնական ըմբռնումներու»: «Սիոնի» հաջորդող համարներում էլ առանձին խմբագրականներով, որոնց դիմելով ընդգծում է այս խնդրի կարևորությունը, անդրադառնում է զեկուցման մեջ բարձրացված և բարեկարգության ենթակա հարցերին՝ ըստ «Զեկուցման» թեմատիկ բաժանման և խմբավորման:

Թորգոմ Սրբազանի մնացյալ քարոզների և հոդվածաշարերի նման, այս խմբագրականները ևս ի մի հավաքելով, Երուսաղեմի միաբանությունը հրատարակում է առանձին մի գրքով, որպես չորրորդ հատորը «Ամբողջական երկերի»: Այսպիսով, «Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» վերնագրված «Ամբողջական երկերի» չորրորդ գիրքը ևս մեկ ամբողջական գործ չէ և ոչ էլ առանձին հոդվածների միացումը որոշակի խմբագրմամբ և գրքային ձևի մեջ ամփոփումով:

«Նօթ մը» խորագրի ներքո հրատարակիչները, անդրադառնալով այս խմբագրականները մեկ գրքով տպագրելու անհրաժեշտությանը ու կարևորությանը, գրում են. «Իր կեանքի վերջալոյսին գրուած յոդուածներու այս շարքը, որոնց մէջ կը ցոլանայ լուրջ և առողջ պահպանողական ոգի մը, որ ամէնէն յատկանշական կողմերէն եղած է Հայաստանեայց Ս. Եկեղեցիին, կը յուսանք որ ո՛չ միայն հայ հասարակացեալին մէջ պիտի արձարձէ իր Եկեղեցին բարեկարգ տեսնելու իղձը, այլ նաև ապագային, եթէ երբեք երջանիկ օր մը գումարուի Ազգային-Եկեղեցական այն ժողովը, որ տարիներով ծնծուած այս խնդիրը իր գործնական հունին մէջ պիտի դնէ, իր կարևոր կշիռը պիտի ունենայ այդ հարցի կարգադրման գործին մէջ»[5]:

Հրատարակիչները նաև «Իբրև յառաջաբան» խորագրի ներքո առաջաբանի փոխարեն զետեղել են «Սիոնի»՝ 1937 թ. սեպտեմբերի խմբագրականը, որը գրված է Պ. Գնորգյանի (Կիպրոս) «Արև» օրաթերթում հրատարակած

---

3 «Սիոն», 1937 թ., էջ 295:

4 Նույն տեղում, էջ 299:

5 Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան, Ամբողջ երկեր, հտ. Դ, Բարեկարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1940, էջ 5:

մի հոդվածաշարի առիթով: Այս հոդվածաշարին Թորգոմ Սրբազանի փված բնորոշումում իսկ երևում է նրա վերաբերմունքը եկեղեցական բարեկարգության հանդեպ: Ասում է, որ իրեն հատկապես դուր է եկել հեղինակի այն միտքը, թե Եկեղեցու բարեկարգություն ասելով պետք է հասկանալ եկեղեցականների պատրաստությունը իրենց ասպարեզի և կոչումի համար և ժողովրդի կրոնական դաստիարակության բարելավումը «այսինքն՝ ամբողջ ազգին քրիստոնէական կեանքի մշակումը իր Եկեղեցիին ճամբով»: Այսպիսով, բարեկարգությունը Թորգոմ Սրբազանի համար, ի տարբերություն այդ բառը Եկեղեցու ռեֆորմացիայի իմաստով գործածողների, ժամանակի հարափոփոխ ընթացքի մեջ Եկեղեցու և հոգևորականների կողմից հոգևոր կյանքի կազմակերպումն է և կրոնական պահանջմունքների բավարարումը Եկեղեցու շրջագծում:

Հոդվածի հենց սկզբում այս ըմբռնմամբ Եկեղեցու բարեփոխությունը համարում է ոչ թե ժամանակի առաջադրած պահանջ նվիրապետական կարգի և ծիսական արարողությունների փոփոխության, այլ այն միտքն է հայտնում, որ բարեկարգության խնդիրը այժմեական լինելուց առավել մշտական և հավերժական է. «Իր Եկեղեցիին զգացումն ունեցող ժողովուրդի մը համար ոչինչ աւելի բնական է քան զայն իր հոգեկան և բարոյական կարիքներուն համընթաց և համապատասխան դրութեան մը մէջ տեսնելու իղձը»:

Մինչ Հայ Եկեղեցու բարեկարգության հարցի քննությանն անցնելը նախ շեշտում է, որ հակավոր է իրարից հստակորեն տարբերակել վերանորոգությունը և բարեկարգությունը: Առաջինը հայերենի վերածված ձևն է ֆրանսերեն reforme բառի, որը հաճախ նաև վերակազմություն է թարգմանվել: Նշում է, որ այդ բառը սկզբից ի վեր բողոքականության իմաստով է գործածվել մեր մեջ, իսկ բարեկարգություն նշանակում է «եղած կարգին բարւոք պահպանումը», գրեթե հոմանիշ կարգապահություն (disipline) բառին:

Այսպիսով, բարեկարգությունը երբեք ռեֆորմացիայի իմաստ չի ունեցել Թորգոմ Սրբազանի համար: Ասում է, թե վերանորոգության, ռեֆորմացիայի կողմնակիցները պահանջում են վերադառնալ քրիստոնեության առաջին դարերին, նախնական Եկեղեցու հավատքի և պաշտամունքի պարզությանը, որն, ըստ իրեն, հնարավոր չէ, քանի որ ժամանակը չի կարելի ետ դարձնել:

Այս հոդվածում մեկ անգամ ևս նա շեշտում է, որ այսօրվա եկեղեցական կյանքն իր պաշտամունքային ծեսերով և ավանդությամբ ծնունդն է մեր նախնիների հոգևոր-իմացական թռիչքի և իր ամբողջության մեջ մի սերտ ներդաշնակություն է կազմում, որի համար էլ «Մեր խորին համոզումն է թէ, մեզի համար, Բարեկարգութիւնը մեր այդ ունեցածը իր բարւոք վիճակին մէջ պահելու ջանադրութիւն միայն պէտք է ըլլայ»:

Որպեսզի այս բարեկարգությունը՝ կարգի բարվոք պահպանությունը, իբրև եկեղեցական կյանքի մշտատև մի ընթացք, հնարավոր լինի իրականացնել, անհրաժեշտ է, որ իր կոչումի և ասպարեզի գիտակցությունն ունեցող հոգևորականություն ունենանք և մեզ ավանդված հոգևոր ժառանգությունը պահելու ունակ մի ժողովուրդ: Ահա այս պատճառով բարեկարգությունը ոչ թե բողոքական ռեֆորմացիայի իմաստով պետք է հարաբերվի Եկեղեցու եվիրապետական կառույցը կազմող աստիճանների հետ, այլ ժողովրդի ու հոգևորականության: Ինչպես Թորգոմ Սրբազանն է գրում. «Բարեկարգութեան կարևորագույն տարրերն են եկեղեցականն ու ժողովուրդը. իսկ այդ երկուքը իրենց պարտականութեան բարձրութեան վրայ պահելու միջոցները՝ կղերին կրթութիւնը և ժողովրդին կրօնական դաստիարակութիւնը»:

Իբրև առաջաբան դրված այս հոդվածից հետո հրատարակիչները զետեղել են կաթողիկոսական կոնդակը, ապա «Ջեկուցագրի» տարբեր կետերին, արծարծած խնդիրներին և հարցադրումներին նվիրված՝ Թորգոմ Սրբազանի «Սինոդում» տպագրած խմբագրականները: Գրքի վերջում, որպես հավելված, բերված են 1932 թ. Ազգային-Եկեղեցական ժողովին և Խորեն Ա Կաթողիկոսին ուղղված Թորգոմ Սրբազանի երկու գրությունները, որոնցում այն միտքն է շեշտվում, թե ժողովրդի աստիճանական հեռացումն ու սառումը իր Մայր Եկեղեցուց պայմանավորված է ոչ թե ծեսի, ժամակարգության ու պաշտամունքի լեզվի բարդությամբ և անհասկանալիությամբ, այլ կրոնական ապրումի նվազմամբ, որն էլ իր հերթին արդյունք է հոգևորականների թերացման և իրենց վերապահված բարձրության վրա չգտնվելուն: Ըստ Թորգոմ Սրբազանի՝ ծիսա-արարողական ու լեզվական որևէ պարզեցում և համառոտում ժողովրդին եկեղեցի չի բերի և ոչ էլ կրոնական կենդանի ապրումի կմղի, եթե չլինեն արժանավոր հոգևորականներ: Հետևաբար, ոչ թե եկեղեցին ու եկեղեցական արարողությունները պետք է փոխվեն, այլ եկեղեցականները:

Որ եկեղեցական բարեկարգության կենտրոնում ոչ թե եկեղեցին, այլ եկեղեցականները պետք է լինեն, Թորգոմ Սրբազանը լավագույնս արտահայտել է հիշյալ գրության ծավալուն, բայց և խտացված հետևյալ տողերում. «Երբ կրօնի ուսումը կը կորսնցնէ իր հմայքը՝ անհմուտ դասախօսներու երեսէն, երբ քրիստոնէական բեմը կը դադրի մեր եկեղեցիներուն ամէնէն կենսունակ զօրութիւնը ըլլալէ՝ շնորհիւ անկարող քարոզիչներու, երբ քահանաներուն կրթութեան գործը կը շարունակէ մատնուիլ մոռացութեան, երբ վարդապետներու պատրաստութեան և զարգացման կարևորութիւնը հետզհետէ չի շեշտուիր աւելի շօշափելի արդիւնաւորութեամբ մը, բարեկարգութիւնը կրնայ այսօր իրականանալ՝ վաղը ոչնչանալու համար. վասնզի արժանաւոր պաշտօնեան միայն կրնայ շարունակել և արդիւնաւորել այնքան ջանքերով իրագործուելիք այս գեղեցիկ գործը»: Ահա այս պատճա-

ռով էլ «Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան հիմնաքարը եկեղեցականներու պատրաստութեան ձեռնարկն է»:

Ազգային-Եկեղեցական ժողովից էլենգ տարի անց Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարքը Եկեղեցու բարեկարգման հարցը և վերջինիս նվիրված «Ձեկուցումը» քննում է՝ մեկնակետ ունենալով նույն այս ըմբռնումը: Ստորև ներկայացնում ենք Հայրապետական կոնդակը, «Ձեկուցումը» և դրանց նվիրված «Միոնի» խմբագրականները: Քանի որ խմբագրականները զուգահեռ են ընթանում «Ձեկուցման» շարադրանքին, ավելորդ կրկնաբանություններից խուսափելու համար, «Ձեկուցումը» և խմբագրականները առանձնաբար ներկայացնելու փոխարեն, Թորգոմ Սրբազանի հետևողությամբ՝ յուրաքանչյուր խմբագրականի հետ միաժամանակ անդրադառնում ենք նաև «Ձեկուցման» համապատասխան հատվածին:

Առաջին խմբագրականը, որը զետեղված է Հայրապետական կոնդակին և «Ձեկուցմանը» կից, ծանուցում է վերջիններիս մասին: Թորգոմ Սրբազանն իր հոդվածաշարի առաջին իսկ հոդվածում ուրախությամբ է շեշտում այն կետը, որ «Ձեկուցման» մեջ բարեկարգության կարևորագույն պայմաններից է հանդիսանում հոգևորականների կրթության և ժողովրդի կրոնական դաստիարակության հարցը: «Միոնի» այս համարում տպագրելով Մայր Աթոռից ստացված հիշյալ երկու գրությունները՝ հույս է հայտնում, որ դրանք առաջ կբերեն «ժողովրդական ուրբ ոգևորութիւն մը և աշխատելու վերազարթումին, վերածաղկումին և վերականգնումին այն Հաստատութեան, որ մեր անմահ նախնիքներէն մեզի հրիտակուած ամէնէն մեծ և պատուական ժառանգութիւնն է»:

Երկրորդ խմբագրականը նվիրված է լուր օրերի ժամերգությանը: «Ձեկուցման» մեջ այս մասին գրված է. «Վերացնել լուր օրերի ժամասացութիւնները, ինչպէս եղել է քրիստոնէական եկեղեցու մէջ մինչև երրորդ դարու վերջերը»: Թորգոմ Սրբազանը չի համաձայնում թե՛ նման կրճատմանը և թե՛ բերվող այն փաստարկին, որ քրիստոնեական եկեղեցում վերջինս չի եղել մինչև երրորդ դարի վերջը: Ավելին, ասում է, որ առաքելական շրջանից է գոյություն ունեցել և երրորդ դարում քրիստոնեության դեմ ծավալված հալածանքների պատճառով է, որ առժամյա այն դադարել է: Պատմականորեն հիմնավորելով, որ դեռևս առաքելական շրջանից է ժամակարգությունը ամենօրյա եղել, այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե որքանով է պատշաճ նման գեղչմամբ «Եկեղեցին, Աստուծոյ տունը, «տուն աղօթից», շաբթուան հինգ օրերուն վերածուի լռութեան և ամայութեան վայրի մը, որուն առջևէն մարդիկ առաւօտ և երեկոյ անցնին ինչպէս շէնքի մը՝ որուն փակ դրան ետև ոստայն են կապած սարդերը»:

Ասում է, որ եթե ամբողջության մեջ հնարավոր չէ կատարել ամենօրյա ժամասացությունները, ապա գոնե իր ամփոփ ձևի մեջ պետք է պահվի այն, որպեսզի երբ հայ հավատացյալը մտնի եկեղեցի, «վառ գտնէ կանթեղը Ս.

Մեղանին վրայ, պէտք է ընդունի աղօթքին, մաղթանքին, ընթերցուածներուն և օրհներգերուն ազդած հոգևոր սփոփանքը, կամ գէթ տեսնէ քահանան լոին, աղօթասոյզ, բեմին կամ գրակալին առջև»: Ի հավելումն ավելացնում է, որ ոչ մի առաքելական և ավանդական հին Եկեղեցի իրեն թույլ չի տա Աստծու տունը լուռ պահել լուր օրերին:

Հաջորդ երապարակումը նվիրված է ժամերգության կրճատմանը: Գտնում է, որ այստեղ ևս չի կարելի ծայրահեղությունների մեջ ընկնել, ամբողջովին մերժելով, ինչպես լուր օրերի պարագայում, և ոչ էլ պնդել, թե անխաթար պետք է կատարվի, համաձայն «Ժամագրքի»: Ըստ Թորգոմ Սրբազանի՝ ժամերգության երկու տեսակ է եղել՝ մեկը վանքերի համար, ուր կատարվել է ամբողջական և անխաթար կերպով, և երկրորդը՝ բնակավայրերի եկեղեցիներում, որտեղ կիրառվել է առավել համառոտված տարբերակը, և պետք է հետևել բանավոր փոխանցմամբ մեզ ավանդված կրճատ նման տարբերակներին, որոնցում սղվել են սաղմոսների և շարականների կանոնների տարբեր միավորները և հիմա էլ անհրաժեշտ է «ներշնչումի տեսակէտով ամէնէն գեղեցիկները պահելու և միշտ գրեթէ երկու տուն ունենալու պայմանաւ, իբրև փոխերգութեան տարրեր»:

Շեշտում է, որ ժողովրդի համար կարևոր է ոչ թե ժամերգության կարճ կամ երկար, այլ «տպատրիչ ու սրտագրաւ ըլլալը»: Այսինքն՝ ժամերգության առիթով ևս վերստին շեշտում է այն միտքը, որ ոչ թե Եկեղեցու կարգերն են հնացել և չեն համապատասխանում ժամանակին, այլ չկա եկեղեցական նախկին կենդանի ապրումը:

Ժամերգությանը նվիրված այս խմբագրականն ավարտվում է ժամանակի քննությունը բռնած և իրար հաջորդող սերունդների համար իբրև պատգամ հնչող հետևյալ խոսքերով. «Ոչ մէկ ժողովուրդ հարկադրուած է պահպանողական լինելու այնպէս և այնքան՝ ինչպէս և որքան մենք»:

Եկեղեցական տոների պարագայում էլ «Ջեկուցումը» վերստին առաջարկում է կրճատումներ և տոների համախմբումներ կատարել, որն էլ իր հերթին հանգեցնելու էր «Տոնացույցի» վերախմբագրմանը: Ինքը, սակայն, տոների պարագայում ևս սխալ է համարում նախնական, քրիստոնեության առաջին դարերին վերադառնալու ձգտումը, քանի որ այդ դեպքում «Տոնացույցից» դուրս կմնան թէ՛ Հայ Եկեղեցու տոնելի շատ սրբեր և թե՛ Տիրամորն ու Խաչին նվիրված տոները, և «Հայ Եկեղեցւոյ տօնակարգէն ջնջուին իր ամէնէն մաքուր և թանկագին խճապատկերներէն մին և միւսը, Տիրամօր դէմքը և Խաչին նկարը, ու ժամագիրքէն պատռուին այն տողերը, որոնք կանխագոյն ժամանակներէ ի վեր ոգեկոչել տուած են և ցարդ կուտան»:

Թորգոմ Սրբազանը գտնում է, թե ուր կյանք կա և աճումի օրենք, այնտեղ միշտ ընդլայնում և բարձրացում կա, և քրիստոնեությունը ամենաքանչելի հանդիսարանն է այս իրողության, որի համար էլ պետք չէ անպատճառ նախնական, սկզբնական վիճակին վերադառնալ բարեկար-

գության համար: Ասում է, որ այսօր ոչ թե «Տոնացույցը» պետք է կրճատենք,
այլ հակառակը՝ ավելացնենք նախապակության պսակին արժանացած և
սրբակրոն կյանքով ապրած ուրիշ հայ Սրբերի հիշատակները ևս:
Անհրաժեշտ է նաև նշել, որ ինչպես «Սուրբք և փոնքում», այնպես էլ
այստեղ. Թորգոմ Սրբազանն անդրադառնում է հաճախ շահարկվող այն
հարցին, թե ինչու մեր Եկեղեցու Տոնացույցում մեծ թիվ են կազմում օտար
սրբերը: Վերստին շեշտում է. որ օտար համարվող այդ սրբերը սրբերն են
Ընդհանրական Եկեղեցու, քանի որ մեր Տոնացույցը կազմվել էր Եկեղե-
ցիների բաժանումից առաջ, որը ևս մեկ վկայությունն է մեր Եկեղեցու
ընդհանրական նկարագրի: Այս ընդհանրականությունը պահելու համար է,
որ մեր Եկեղեցում 5-րդ դարից հետո գրեթե սրբեր չեն ներառվել, որպեսզի
«ուրիշ եկեղեցիներու և մերինի միջև դաւանաբանական պատճառներով
գոյացած խրամը աւելի չխորանայ. այս պատճառով եթէ չենք կրցած նորեր
առնել անոնցմէ, չենք ուզած մերժել նաև արդէն առնուածները»:

«Մաշտոց» և «Ճաշոց» վերնագրված խմբագրականներում էլ նույն կերպ անպատշաճ և սխալ է համարում Մկրտության, Ձեռնադրության, Պսակի և այլ խորհուրդների փարբեր հատվածների կրճատումները՝ վերստին շեշտելով, որ այստեղ եթե բարեկարգության անհրաժեշտություն կա, ապա այն պետք է վերաբերվի ոչ թե բուն ծեսին կամ ընթերցվածներին, այլ այն կատարողների կատարման կերպին և ներկաների պահվածքին ու վերաբերմունքին: Այսինքն՝ կրոնական կենդանի, ճշմարիտ ապրումի անհրաժեշտությունը ելակետ ունենալով, ծեսի պարագայում էլ, բնականաբար, կարևորում է կատարումը և արձագանքը՝ արարողությանը ներկա եղող ժողովրդի վերաբերմունքը, որ բարեկարգության կարիքը ոչ թե «Խորհուրդներուն և անոնց կատարումին, այլ անոնց կատարիչներուն և ընկալուչներուն մէջ պէտք է փնտրել»:

Կրճատման և համառոտման ջատագովներին և կողմնակիցներին Թորգոմ Սրբազանը հիշեցնում է, որ ծիսական և մյուս արարողական ծավալուն հատվածներն արդյունք են ոչ թե հետագայի հավելումների և խճողումների, այլ կառուցիկ մի միություն են կազմում իրենց ամբողջության մեջ որպես առանձին գրքեր՝ Տոնացույց, Ճաշոց, Մաշտոց ու Ժամագիրք, որոնցում ներքին կապակցություն ունեն թե՛ փարբեր միավորները և թե՛ յուրաքանչյուր միավորի ենթամիավորները, որոնք փվյալ գաղափարի ու խորհրդի հոգևոր ստեղծագործական զարգացումն են ներկայացնում: Ինչպես ինքն է գրում. «Ոչինչ դիպուածական կը գտնես անոնց մէջ, ոչինչ՝ ափյափոյ: Մէն մի ժամերգութիւն, մէն մի խորհուրդ պարզումն է մեծ զգացումի մը կամ մտածումի մը, որ կը սկսի իբրև փթթումով մը, և կը շարունակուի զգացումի յառաջպուական շարժումի մը մէջ մինչև որ կշռադրուած խօսքի, երգի և խորհրդական շարժուածքներու ներդաշնա-

կութեան մէջէն, կարծես հետզհետէ հաստնացած, դուրս կուգայ իմաստը, հոգիին վրայ յաւէտ բարոյացուցիչ ներգործութեամբ մը»:

Անթուլատրելի համարելով «Եկեղեցւոյ խորհուրդներու բանական և արարողական կազմին», որոնք «սիւներն են մեր հաւատքին շէնքին», բարեկարգության անվամբ որևէ խախտում կատարելը, «Ձեկուցման» հետևողությամբ ճիշտ է համարում ծանր հիվանդաց, դժվարածին կնոջ, այսահարների և լուսնոտների, պատանու մազերը առաջին անգամ կտրելու համար սահմանված այս և համանման մի շարք կանոնները հանելը, որոնք արդեն իսկ չէին կատարվում և տեղ չէին գտել «Մաշտոցի» նոր հրատարակություններում:

Գրքում զետեղված վեցերորդ հոդված-խմբագրականը նվիրված է հայ հոգևորականության ցենզի հարցին, որը շարունակ այնքան կարևորում էր Թորգոմ Սրբազանը: Ահա այս պատճառով, եթե մյուս հարցերում վիճելի կամ անընդունելի դրույթներ էր գտնում, այս մեկի կարևորությունն ու հրամայական անհրաժեշտությունն անվիճելի է համարում և ժամանակի թելադրանքով ամենակարևորներից մեկը մեր Եկեղեցու համար: Ինչպես ինքն է գրում. «Կ'ապրինք այնպիսի թուականի մը մէջ, ուր ոչ մէկ կրօնական կեանք չի կրնար շարունակուիլ, ոչ մէկ Եկեղեցի, մերինը մանաւանդ, չէ կարող փնել, եթէ չունի իր մէջ բարձրագոյն կրթութեամբ զօրացած հոգևորականներու կարևոր թիւ մը»:

Ասում է, որ հայ հոգևորականների պատրաստվածության հարցը մեր Եկեղեցու համար ոչ թե բարեկարգության, այլ գոյության խնդիր է:

«Ձեկուցումը» և վերջինիս հետևողությամբ Թորգոմ Սրբազանը անդրադառնում են նաև անցյալ դարից հայ իրականության մեջ բազմիցս քննարկված, չարչրկված և անգամ շահարկված կուսակրոնության հարցին: Ինչպես Թորգոմ Սրբազանն է գրում՝ «Բարեկարգութիւն ըսելով լոկ այդ հարցը կ'իմանան, իսկ անոր լուծման միակ կերպը կը նկատեն կուսակրօնութեան ջնջումը»: «Ձեկուցումը» ևս շեշտում է կուսակրոն հոգևորականության կարևորությունը Եկեղեցու համար: Քանի որ այս հարցը «եկեղեցագիտական տեսակէտով՝ վարդապետական ըլլալէ առելի և առաջ, կարգապահական է», անդրադառնում է կուսակրոնության առաջացման հանգամանքներին և պատմական զարգացմանը՝ գտնելով, որ տվյալ ժամանակահատվածում սխալ կլիներ փոխել իրավասությունների այն շրջանակը, որը գծված է ամուսնացյալ քահանաների և կուսակրոն հոգևորականների համար: Անդրադառնալով այն իրողությանը, որ կուսակրոն հոգևորականներից ոմանք իրենց եկեղեցական բարձրության վրա չեն մնում դարձյալ բարեկարգությունը որպես եղած կարգի բարվոք պահպանություն համարելով, ասում է, որ նման հոգևորականներից պետք է ազատվել ու ձեռնադրվելիս ճիշտ ընտրություն կատարել և ոչ թե կուսակրոնությունը ջնջել: Իբրև ասվածի ամփոփում և եզրակացություն՝ գրում է. «Ամուսնաւոր

քահանայութիւնը անհրաժեշտ է Հայ Եկեղեցւոյ կեանքին համար, իսկ ամուրի հոգևորականութիւնը՝ անոր գոյութեան պահպանութեան համար»:

Ամուսնական և ամուսնալուծական հարցերում ևս համաձայնում է «Ջեկուցման» դրույթներին՝ միաժամանակ շեշտելով, որ հնարավորինս խիստ պետք է լինել ամուսնալուծության իրավունք տալու պարագային՝ «հակառակը անկարգութեան պիտի տաներ Եկեղեցին և ոչ թէ բարեկարգութեան»:

Նոր տոմարի հարցը Թորգոմ Սրբազանը համարում է երկրորդական աստիճանի եկեղեցագիտական հարց, որի լուծումը ժամանակին է վերապահում:

Սքեմի վերաբերյալ «Ջեկուցման» մեջ ասվում է. «Գերագոյն Հոգևոր Խորհուրդը կարծում է, որ յարմար կը լինի պարտադրել հոգևորականութեան հոգևոր սքեմ կրել եկեղեցում, օրինակապարութիւնների, պաշտօնական հանդէսների և հանգամանքների ժամանակ, որից դուրս արտօնել նոցա աշխարհիկ սքեմ կրել»: Այս հարցի քննարկումը, ավելի ճիշտ՝ շահարկումը, մեր ազգային եկեղեցական կյանքում Թորգոմ Սրբազանը համարում է ցանկությունը այն մտայնությունը կրողների, ովքեր «բարեկարգութիւն ըսելով արդէն ուրիշ ոչինչ կը հասկնան բայց միայն հոգևոր երաժշտութեան տրուած համերգային շողշողանք, ամբոխութեան ջնջում և քահանաներու աշխարհականօրէն հագուիլը»: Այսինքն՝ Եկեղեցին զրկել իր ավանդականությունից ու նվիրականությունից: Ընդունելով հանդերձ այն խոսքը, թե հանդերձը չէ, որ հարգելի է դարձնում հոգևորականին՝ միաժամանակ շեշտում է. «Կրօնաւորը պէտք է կրօնաւոր ըլլայ ինչպէս իր հոգւոյն և կեանքի մէջ, նոյնպէս և իր բոլոր արտայայտութիւններուն, իր կենցաղին, իր վարքին ու բարքին, իր խօսքին, իր նիստուկացին և նոյնիսկ իր հագնուածքին մէջ»:

Գիտակցելով նաև, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդը սքեմի հարցը քննարկման է դրել այն պատճառով, որ Խորհրդային Միությունում ծավալված հալածանքների հետևանքով հոգևորականներն ի զորու չէին հոգևոր հանդերձներով դուրս գալ, տարբերակիչ մոտեցմամբ գտնում է, որ եկեղեցուց դուրս առանց սքեմի կարելի է շրջել միայն այն երկրներում, ուր պետական արգելող հանգամանքներ կան: Մերձավոր Արևելքում, քանի որ հայ կյանքն ու ավանդությունը առավել անխաթար վիճակում էին, ինչպես նաև այս երկրների մյուս ժողովուրդների և կրոնական հարանվանությունների սովորություններն ի նկատի ունենալով, այստեղ պարտադիր է համարում հոգևորական փակեղը, պարեգոտը և վերարկուն, իսկ եվրոպական ու հեռավոր գաղթօջախներում «փոխանակ փակեղի՝ պատշաճ բեղոյր մը միայն ընտրելով, և առնուազն պարեգօտ մը ունենալով անհրաժեշտ, կլիմային համեմատ թանձր կամ թեթև վերնազգեստի մը հետ. իսկ բոլորովին աշխարհիկ զգեստը անպատշաճ է իսպառ՝ հայ հոգևորականին համար»:

«Զեկուցումը» անդրադարձել էր նաև քահանաների ապրուստի հարցին՝ գտնելով, թե արդեն ժամանակն է, որ քահանային պահի ոչ թե ծուխը, այլ նաև կանոնավոր ամսական ստանա իր ծառայած թեմից: Թորգոմ Սրբազանը եկեղեցականի համար այս հարցը համարելով պատվո ե կյանքի հարց, ճիշտ է գտնում «Զեկուցման» մեջ արտահայտված դիրքորոշումը: Նաև ավելացնում է, որ հիմա փոխվել է պատմական և տնտեսական այն վիճակն ու միջավայրը, որում գտնվում էին Հայ Եկեղեցին ու հայ քահանան մինչև Հայոց Մեծ եղեռնը: Բուն հայրենիքում հայ գյուղացին իր բերքից բաժին էր հանում քահանային: Վերջինս ուներ նաև իր սեփական հողն ու անասունները և այս ամենով կարողանում էր ապրել: Եղեռնից հետո օտար ափերում հանգրվանած և համայնքային կյանքով նոր-նոր կազմակերպվել փորձող միջավայրում հնարավոր չէր շարունակել նախկին ծխական ընդունված կարգով. «Եկեղեցականը պէտք չէ ձեռք երկարէ դրամի համար. իր իրաւունքը, ժողովարդին հոգևոր տուրքը, Եկեղեցին պէտք է վճարի իրեն: Այս կերպով է որ կը փրկուի իր պատիւը»:

Ինչ վերաբերում է Պահքի վերացմանը և Աստվածապաշտության լեզվին, Թորգոմ Սրբազանը, «Զեկուցմանը» համամիտ, գտնում է, որ Պահքը ոչ պետք է վերացնել ե ոչ էլ պարտադրել, այլ կամավոր թողնել, սակայն չի համաձայնում «Զեկուցման» մեջ արտահայտված այն մտքի հետ, որ Պահքը դադարել է կրոնական ապրում լինելուց և վերածվել է սովորույթի: Ասածը հիմնավորելու համար օրինակներ է բերում իր հովվական փորձառությունից:

Աստվածապաշտության լեզվի մասին «Զեկուցման» մեջ ասում է, թե գրաբարը, անհասկանալի դառնալով, անհասկանալի է դարձրել նաև նրանով կատարվող հասարակաց աղոթքը, որի պատճառով այն չի ծառայում իր նպատակին՝ «ստեղծել ընդհանուր կրօնական տրամադրութիւն աղօթքների մէջ»: Ասվում է, թե եղած առաջարկները՝ թարգմանել Ս. Գիրքը, աղոթքները ու շարականները, ցանկալի են, բայց դժվար իրագործելի: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ «Գերագոյն Հոգևոր Խորհուրդը հնարաւոր է գտնում թոյլատրել, որ Ս. Գրքի որոշ հատուածները և Հայրերի թղթերը թարգմանաբար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով, մինչև որ հնարաւոր կը լինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանած տեսնել»: Թորգոմ Սրբազանը գրում է, որ այս մասին ժամանակին հայտնել է իր կարծիքը, որն էլ ամբողջությամբ մեջ է բերում:

Անհրաժեշտ է նշել, որ երանաշնորհ Պատրիարքն այս հարցին անդրադարձել է ոչ միայն հիշյալ գրությամբ, այլև «Հնդկահայքում» ու մի շարք ուրիշ հրապարակումներում, քանի որ, ինչպես անցյալ դարակեսից հայ իրականության մեջ քննարկվում էր գրական լեզվի հարցը՝ գրաբարից աշխարհաբարին անցնելը, որը պատմության մեջ հայտնի է գրապայքար անվանմամբ, նույն կերպ այս դարասկզբից Եկեղեցու բարեկարգության հարցի ներքո սկսվեց քննարկվել եկեղեցական արարողությունների լեզուն

մատչելի՝ աշխարհաբար դարձնելու հարցը: Թորգոմ Սրբազանը միշտ կ
ընդդիմացել է այս տեսակետին՝ գտնելով, որ այդ դեպքում կխզվի անցյալի
հետ հոգևոր միության կապը: Նաև իրավիճակը էականորեն փոխվեց Հայոց
Մեծ եղեռնից հետո. երբ արևմտահայությունը ցրվեց ողջ աշխարհով մեկ ու
ատրիճանաբար թուլացավ բնաշխարհից կտրված սերունդների կապը
մայրենի լեզվի հետ: Նման պայմաններում արդեն գրաբարից աշխարհա-
բարի անցնելը փաստարկ չէր կարող ծառայել, քանի որ, դժբախտաբար,
աշխարհաբարն իսկ դժվար ընկալելի էր դառնում: Նման պայմաններում
ստացվում էր, որ Եվրոպայում ու Ամերիկյան աշխարհամասում, հասկա-
նալիության այդ փաստարկից ելնելով, հարկավոր էր աստվածապաշտու-
թյան լեզուն թարգմանվեր այն երկրի լեզվով, որում ապրում էր տվյալ
գաղութի հայությունը:

Այսպիսով 1930-ական թվականներից ստեղծվում է մի վիճակ, որը
հիշեցնում է անցյալ դարի 30-ական թթ.: Այն ժամանակ տարբեր բարբառ-
ների միջև կտրտրակված հայության համար ընդհանուր հասկանալի գրական
լեզու կարող էր լինել գրաբարը: Նույն կերպ հետեղեռնյան շրջանում,
մայրենի լեզվի նահանջի պայմաններում, գրաբարը դառնում է ոչ միայն
անցյալի հետ, այլև տարբեր համայնքների միջև հոգևոր միության կապ, և
«Հայր Մերը», ժամակարգության ու ծիսական տարբեր արարողությունների
ժամանակ շարունակ հնչող հանրածանոթ երգերը, աղոթքներն ու հոգևոր
բանաձևումներն այն կրողների համար լեզվական ընդհանրության մի շերտ
էին ստեղծում նրանց հոգեպես կապելով իրար և անցյալի ժառանգությանը:

Վերստին շեշտելով, որ բարեկարգություն չի նշանակում նախնյաց
ավանդություններից հեռանալն ու արարողության պարզեցումը, Թորգոմ
Սրբազանը նշում է, որ ընդամենը կես դար առաջ, երբ քահանաները
նվիրումով էին կատարում իրենց պարտականությունները, անգամ թուրքա-
խոս հայերը հասկանում էին եկեղեցում հնչող գրաբարը: Եվ գտնում է, որ ոչ
թե գրաբարից պետք է հրաժարվել, այլ այն նվիրումով հնչեցնել, ինչպես
նաև ժամանակի արևմտյան Եկեղեցիների օրինակով՝ կատարվող արարո-
ղությունները տպագրել անհրաժեշտ ծանոթագրություններով և հնարավո-
րության դեպքում նաև զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ:

Թորգոմ Սրբազանը հօգուտ գրաբարի պահպանության մտոնացույց է
անում նաև մեկ այլ կարևոր հանգամանք, որ մեր Եկեղեցին նաև ազգային
Եկեղեցի ու հաստատություն է և իր բուն առաքելությունից բացի կոչված է
«Հայութեան մէջ պահպանելու ինչ որ ազգային է և ազգին հոգւոյն հետ կը
զօդէ իր ժողովուրդը», և որ «Եկեղեցին է, այժմ, այն գանձարանը, ուր մեր
անցեալ սրբութեանց հետ կը պահպանուի դեռ Գրաբարը»:

Որպես ասվածի հավաստում՝ վկայակոչում է նաև կաթոլիկ և ուղղա-
փառ Եկեղեցիները, որոնք, որպես անցյալի ավանդույթի և նվիրապետական
կարգի վրա խարսխված Եկեղեցիներ, վերստին ձգտում են պահպանել

լատիներենն ու հունարենը եկեղեցական լեզվում, թեև ոչ միայն ազգային Եկեղեցի չեն, այլև իրենց եկեղեցական կառույցի մեջ մտնում են տարբեր երկրներ ու ժողովուրդներ իրենց տարբեր լեզուներով:

Այս հիմնավորումներից հետո, իբրև ամփոփում-եզրահանգում ասփվածապաշտության լեզվի մասին ասում է. «Ս. Պատարագը և աղօթքները և շարականները բոլորովին պահելով գրաբար, քարոզանման մեծ աղօթքները կարդալ միայն Աշխարհաբար, իսկ Հին Կտակարանի և Առաքելական ընթերցուածները նոյնպէս կարդալ լոկ կամ նաև Աշխարհաբար: Աւետարանի ընթերցուածները պէտք չկայ բնաւ Աշխարհաբարի վերածելու. այնքան պարզ է անոնց Գրաբարը, ինչպէս իրենց իմաստը»:

Այս շարքի վերջում հրատարակիչները գետեղել են նաև «Առաջին քայլը» խմբագրականը, որը թեև նվիրված չէ «Ջեկուցման» մեջ արծարծված հարցերին, սակայն նրանում առավել հստակ է ցոլանում Թորգոմ Սրբազանի ըմբռնումը բարեկարգության՝ որպես եղածի բարվոք պահպանության բուն էության և խորհրդի մասին: Բարեկարգության ճանապարհի առաջին քայլն է անվանվում Խորեն Ա Կաթողիկոսի որոշումը, որը նախորդել էր հայրապետական կոնդակին և «Ջեկուցմանը», Սրբոց Թարգմանչաց աշնանային տոնի ժամանակ կատարել նաև հայոց գրերի գյուտի և Ս. Գրքի հայերեն թարգմանության հիշատակը: Թեև հայրապետական այս տնօրինումը բարեկարգության հարցի պաշտոնական քննարկումը սկսելուց առաջ է կատարվել, սակայն Թորգոմ Սրբազանն ասում է, թե այս տնօրինմամբ խանդավառվողները ցանկանում են մի կապ տեսնել վերջինիս և Բարեկարգության հրահանգի միջև: Իր կողմից էլ ավելացնում է, թե կարող ենք «Թարգմանչաց տօնի մտածումը բարեկարգութեան ձեռնարկին իբրև ծրագիր կամ յատկանշիր նկատել»: Թարգմանչաց տոնը գրերի գյուտով և Աստվածաշնչի թարգմանությամբ «Տօն ազգային և եկեղեցական» հռչակելով՝ անմահացնում ենք հիշատակը Թարգմանչաց շարժման, և բարեկարգությունն էլ պետք է դիտել այդ շարժման շրջագծում և բխեցնել նրանից:

Ըստ Թորգոմ Սրբազանի՝ բարեկարգությունը հենց հայ դպրության ոսկեդարն էր, իսկ բարեկարգիչները՝ մեր Սուրբ Թարգմանիչները: Հետևաբար բարեկարգությունը պետք է լինի «վերանորոգումը կամ շարունակութիւնը միայն անոնց ձեռքով արդ կատարուածին. այսինքն՝ «աստուածագործ մշակութեան»* մեծ շարժումին»:

Ո՞րն էր Թարգմանչաց նպատակը հինգերորդ դարում և որը պիտի լինի մեր օրերում. «Մօտեցնել կրօնքը ժողովուրդին. այս միայն էր և եղաւ Անոնց նպատակը, իրենց գործին ամբողջ ընթացքին. այս պէտք է լինի նաև հիմակ

* Չակերտներում բերվածը Կորյունի խոսքերն են:

հետապնդումներ միակ բանը բպոր այն աշխատութեանց միջոցին. զորս առաջադրած ենք ընկ»:
բարեկարգության բուն հարցը էության մեջ է և ոչ թե

Այսպիսով. բարեկարգության բուն հարցը էության մեջ է և ոչ թե ձևական՝ իր իսկ բնորոշմամբ երկրորդական, երրորդական և չորրորդական հարցերի զեղչման կամ հավելման մեջ, այլ «անիկա ժողովուրդներու կեանքին զերագոյն յեղաշրջումովը անոնց հոգիին մէջ նոր ու փրկարար մտափոխութեան մը կառուցումն է. բան մը, որ, ինչպէս ըսինք, եղած-կատարուած է արդէն անգամ մը և ընդմիշտ մեր մէջ տասնեհինգ դարեր առաջ»:

Իբրև ամփոփում ասում է, որ բարեկարգության նպատակն է Եկեղեցին առավել մոտեցնել և ընտանի դարձնել ժողովրդին, բայց առանց նեղելու Հայոց Եկեղեցու Առաքելական, Արևելյան, Ազգային և վաղնջական նկարագիրը, որի համար անհրաժեշտ է ոչ միայն Եկեղեցին մոտեցնել ժողովրդին, այլև «հանել Ազգը, քրիստոնէական դաստիարակութեամբ, Անտարբերութեան բարոյական բարձրութեան»:

Այսպիսով, Թորգոմ Սրբազանի համար Հայ Եկեղեցու բարեկարգությունը ոչ թե Եկեղեցու բողոքական ըմբռնմամբ ռեֆորմացիան է, նվիրապետական կարգի և ավանդության փոփոխությամբ, այլ եղած կարգի բարվոք պահպանությունը: Եկեղեցու բարեկարգության նպատակը, ըստ Թորգոմ Սրբազանի, չպետք է լինի նրա բաղկացուցիչ տարրերի փոփոխությունը, այլ Եկեղեցին ժողովրդին և ժողովուրդը Եկեղեցուն մոտեցնելը, հոգևոր կյանքի վերանորոգությունն ու վերարծարծումը ժողովրդի կյանքում, որի համար անհրաժեշտ է ոչ թե պարզեցնել Եկեղեցու ծեսը, ժամակարգությունը, լեզուն և, ընդհանրապես, նվիրապետական ողջ կառույցը, այլ այս ամենը հասու դարձնել ժողովրդին, նրանց պարզեցնելու փոխարեն ընկալելի դարձնել, որի համար էլ, Թորգոմ Սրբազանի ըմբռնմամբ, եկեղեցական բարեկարգության կենտրոնն ու առանցքը կազմում են պատրաստված հոգևորականները և բարեպաշտ ժողովուրդը: Այս երկու բաղձանքների նվաճումը կհասցնի Եկեղեցու բարեկարգմանը, և Եկեղեցու բարեկարգման ուղին դեպ այս երկու բաղձանքները տանող ճանապարհը գտնելն է: